ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտ
Տնտեսագիտության և ֆինանսների ամբիոն

Մագիստրատուրայի ընդունելության քննության հարցաշար
Մասնագիտությունը՝
«Մարդկային ռեսուրսների կառավարում»

Հաստատված է
Տնտեսագիտության և ֆինանսների ամբիոնի կողմից
Արձանագրություն № 01-26 (30.01.2026-ից)

Ամբիոնի վարիչ՝
Մ. Հ. Ոսկանյան

Երևան, 2026

1. Ներկայացրեք կառավարման դասական դպրոցների էությունը և հիմնական ներկայացուցիչներին (օր.՝ Frederick Winslow Taylor, Henri Fayol, Max Weber):
2. Վերլուծեք դասական դպրոցների հիմնական գաղափարներն ու դրանց նշանակությունը ժամանակակից կառավարման համակարգում:
3. Սահմանեք «մարդկային ռեսուրսներ», «աշխատանքային ռեսուրսներ» և «անձնակազմ» հասկացությունները՝ բացահայտելով դրանց փոխկապակցվածությունը:
4. Բնութագրեք մարդկային ռեսուրսների քաղաքականության բովանդակությունն ու դերակատարությունը կազմակերպությունում:
5. Ներկայացրեք մարդկային ռեսուրսների քաղաքականության հիմնական տեսակները և դրանց գործնական նշանակությունը:
6. Բնութագրեք մարդկային ռեսուրսների պլանավորման էությունն ու նպատակային ուղղվածությունը:
7. Ներկայացրեք մարդկային ռեսուրսների պլանավորման հիմնական փուլերը:
8. Թվարկեք հավաքագրման հիմնական աղբյուրները և դրանց կիրառման առանձնահատկությունները:
9. Բնութագրեք ադապտացիայի գործընթացը և դրա փուլային կառուցվածքը:
10. Ներկայացրեք մոտիվացիայի բովանդակությունը և հիմնական տեսակները:
11. Վերլուծեք մոտիվացիայի հիմնական տեսությունները (օր.՝ Abraham Maslow, Frederick Herzberg, Victor Vroom):
12. Բնութագրեք խթանների բովանդակությունը և հիմնական ձևերը:
13. Ներկայացրեք անձնակազմի զարգացման նպատակներն ու կազմակերպական նշանակությունը:
14. Թվարկեք անձնակազմի զարգացման հիմնական ձևերը:
15. Բնութագրեք կարիերայի զարգացման փուլային կառուցվածքը:
16. Ներկայացրեք անձնակազմի գնահատման նպատակներն ու կազմակերպական նշանակությունը:
17. Աշխատանքի նորմավորման էությունը և հիմնական սկզբունքները:
18. Աշխատանքի նորմավորման դերն ու նշանակությունը արտադրական կազմակերպությունների տնտեսագիտական աշխատանքներում:
19. Արտադրական գործընթացը և դրա դասակարգումը:
20. Արտադրական օպերացիան և դրա վերլուծությունը:
21. Աշխատաժամանակի ծախսումների էությունը և դասակարգումը:
22. Աշխատաժամանակի ծախսումների ուսումնասիրման մեթոդները:
23. Անընդհատ (համատարած) քրոնամետրաժի իրականացման կարգը:
24. Ընտրանքային քրոնոմետրաժի իրականացման առանձնահատկությունները:
25. Ցիկլային չափումների մեթոդով քրոնոմետրաժի իրականացման առանձնահատկությունները:
26. Անմիջական չափումների եղանակով աշխատաժամանակի անհատական նկարահանումը:
27. Աշխատանքային օրվա բրիգադային և խմբային նկարահանումների առանձնահատկությունները:
28. Պահային (մոմենտային) դիտումների եղանակով աշխատաժամանակի ուսումնասիրության էությունը և կիրառման ոլորտները:
29. Սարքավորման օգտագործման ժամանակի և արտադրական գործընթացի նկարահանման առանձնահատկությունները:
30. Ինքնանկարահանման իրականացման կարգը:
31. Ժամանակի նորման և կազմը:
32. Արտադրանքի նորման և կապը ժամանակի նորմայի հետ:
33. Սպասարկման նորմա
34. Թվաքանակի նորմա

35. Աշխատանքի վարձատրության տարիֆային համակարգի էությունը և տարրերը
36. Աշխատավարձի ձևերի ու համակարգի ընդհանուր բնութագիրը
37. Աշխատանքի վարձատրության ժամանակավարձային ձևը և համակարգերը
38. Աշխատանքի վարձատրության գործավարձային ձևը և համակարգերը
39. Աշխատանքի վարձատրության կոլեկտիվ գործավարձային ձևը
40. Աշխատանքի վարձատրության ուղղակի և անուղղակի գործավարձային համակարգեր
41. Աշխատանքի վարձատրության գործավարձային-պարգևատրական և գործավարձային-առաջադիմական համակարգեր
42. Աշխատանքի վարձատրության ուղղակի կամ պարզ ժամանակավարձային համակարգեր
43. Աշխատանքի վարձատրության ժամանակավարձային-պարգևատրական և ժամանակավարձային-պարգևատրական նորմավորված առաջադրանքով համակարգեր

Գրականության ցանկ

1. Մ.Ե. Պետրոսյան, Անձնակազմի տնտեսագիտություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Տնտեսագետ», 2018թ.
2. Մ.Ե. Պետրոսյան, Աշխատանքի նորմավարում, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Տնտեսագետ», 2007թ.
3. Ֆ.Ն. Մայիլյան, Աշխատանքի շուկան և աշխատավարձի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Տնտեսագետ», 2005թ.
4. Հ.Ս. Գրիգորյան, Ն.Ա. Սամվելյան, Աշխատանքի ցուցանիշների պլանավորում և վերլուծություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Տնտեսագետ», 2009թ.
5. Ս.Մ. Պողոսյան, Աշխատանքի կազմակերպում, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Զանգակ-97», 2000թ.
6. Управление персоналом организации: конспекты лекций. Учебное пособие – М.: Мир науки, 2017.
7. В.В. Адамчук, Экономика и социология труда, Учебник для вузов. — М.: ЮНИТИ, 2000г.
8. Ю.П. Кокин, П.Э. Шлендер, Экономика труда, 2-е изд., перераб. и доп. - М.: 2010г.